ԼԱՎՈՒԹՅՈՒՆ ԱՐԱ՝ ՁՈՒՐԸ ԳՅԻՐ...

ԲԱՐԵԳՈՐԾ

BAREGORTS Սեպտեմբեր-դեկտեմբեր, 2011, № 15-16 БАРЕГОРЦ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ԵՌԱՄՍՅԱ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

ԳԵՂԵՑԻԿ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է...

Ազատագրված Արցախի և մայր Հայաստանի կապերի ամրապնդումն իրականացվում է ոչ միայն Երևանի և Արցախի պետական համալսարանների սերտ համագործակցությամբ, այլև մեր հայրենիքի այդ չքնաղ երկրամասը բարեկարգելու, նրա բնակիչների հոգևոր ու գիտամշակութային կյանքի կազմակերպման, սոցիալ-կենցաղային հարցերի լուծման շարունակական գործընթացով, որ իրականացնում է Երևանի պետական համալսարանը: Տարիներ շարունակ հայոց մայր բուհի ռեկտորատը, ուսանողական գիտական խորհուրդը Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի« հետ միասին են կենսագործվում այն հայրենանվեր ծրագրերը, որոնցով իրականություն են դառնում ամեն գարուն և աշուն պարբերաբար կրկնվող համատեղ գիտական նստաշրջանները, ռազմավարական ու պատմաճանաչողական կարևոր նշանակություն ունեցող ծառատունկը Բերձորում ու Քարվաճառում, ուսանող երիտասարդության հայրենագիտական արշավները դեպի Ամարաս, Գանձասար, Ծիծեռնավանք, Դադիվանք ու պատմաճարտարապետական այլ հուշարձաններ:

Գեղեցիկ այս ավանդույթի սկիզբը շուրջ մեկ տասնամյակ առաջ դրել էր «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենը: Դեռևս 2009 թվականից ԵՊՀ ուսանողական կառույցները գործուն մասնակցություն են հանդես բերել Արցախի հետ կապերի ամրապնդման ծրագրերում: Դեպի Արցախ ուղևորությունը սովորաբար ուղեկցվում էր երկու բուհերի ուսանողների մերձեցման անմոռաց դրվագներով, Արցախի ղեկավարության հետ բովանդակալից հանդիպումներով, երբեմն էլ Սփյուռքի մեր հայրենակից բարեգործների ուխտագնացությամբ: Պետք է տեսնել այն ուսանողների հրճվանքն ու ցնծությունը, ովքեր առաջին անգամ են այցելում արցախյան նվիրական վայրեր: Այս աշնանը գովելի նախաձեռնություն էին հանդես բերել ԵՊՀ երիտասարդական կառույցները Միհրան Հակոբյանի, Ցոլակ Հակոբյանի և Վահագն Վարագյանի եռանդուն ղեկավարությամբ:

Ավանդույթը ավագները փոխանցում են հաջորդներին, և նրանք էլ ստանձնում ու փոխանցում են ազնվորեն: Հիմնականում նրանք էին կատարել շուրջ 60 ուսանողների և նրանց ուղեկիցների ճանապարհի, նորակառույց ճոպանուղիով Տաթև այցելության, Ստեփանակերտում հյուրանոցի և անհրաժեշտ մյուս ծախսերը:

Ծառատունկն այս անգամ իրականացվեց նախ՝ Ասկերանի շրջանում և ապա՝ Բերձորում, որով էլ հիմնադրամի միջոցներով և ԵՊՀ ու Արցախի պետական համալսարանի ուսանողների ձեռքով տնկված ընկուզենիների և այլ ծառերի թիվն անցավ 7 000- ից:

Նոյեմբերի 5-ին Ասկերանի դպրոցականների և ԵՊՀ ուսանողների համատեղ ծառատունկը նախապես պայմանավորված էր: Չէ՞ որ սահմանամերձ Ասկերանը Արցախի արևելյան դարպասն է, և 1988 թ. փետրվարի 22-ին այնտեղից է սկիզբ առել արցախցիների՝ Բաքվին ու Մոսկվային չենթարկվելու և ինքնապաշտպանության դիմելու գործընթացը:

Բուն պատմական իրողությունը, ինչպես ուսանողներին ներկայացրեց դեպքերի անմիջական մասնակից, դիմադրության կազմակերպիչ, զենքով ու արյունով իր ծննդավայրը թշնամական հարձակումից պաշտպանած պատմաբան, ԵՊՀ շրջանավարտ Սլավիկ Առուշանյանը, դեռևս ճշգրտորեն ու լիովին չի բացահայտվել: Շուրջ 100 հազարանոց ազերիական վայրենի խառնամբոխն իբր «խաղաղ երթով» գալիս էր Արցախը նվաճելու: Իր ճանապարհին ամեն ինչ ավերող այդ գազազած ավազակաոհմակի հարձակումն այստեղ են կասեցրել զենք վերցրած հայ քաջամարտիկները, և ոչ թե ոմն Խուրաման խանումի՝ ամբոխի ոտքերի տակ նետած լաչակը, ինչպես այդ խայտառակությունը շտապեցին աշխարհին ներկայացնել Բաքուն ու Մոսկվան՝ երթը որակելով որպես խաղաղասեր ու մարդասեր ազերի ժողովրդի «բարի կամքի» դրսևորում: Սակայն այդ ամբոխը չորս կմ խրվել էր մեր սահմանը և հասել մինչև այստեղ, ավերել էր ոչ միայն շրջակա հայկական գյուղերը, ալրաղացն ու նավթաբազան այլև հեկտարներով նորատունկ այգիներ: Մարդիկ դիմել են հարկադիր ինքնապաշտպանության՝ չենթարկվելով ո՛չ Բաքվի, ո՛չ էլ Մոսկվայի որոշումներին: Պատերազմ է եղել, զոհեր ենք տվել, վիրավորներ ունեցել... բայց հետ ենք շպրտել թշնամուն:

Տանկը ևս հուշարձան է դարձել...

Այստեղ զոհվածների հիշատակին խաչքար է կանգնեցված, որին ծաղիկներ դրին աշակերտներն ու ուսանողները, իսկ պատվանդանին բարձրացված տանկը այդ ողբերգական ու հերոսական օրերի լուռ վկան է:

Պատրաստվում են զոհվածների հուշարձանին այցելության

Ս. Առուշանյանի հետաքրքիր պատումների ուղեկցությամբ իրականացվեց ծառատունկը Ասկերանում: Հրաժեշտից առաջ նա շնորհակալություն հայտնեց մայր բուհին ու այդ հրաշալի միջոցառման մասնակիցներին:

Ճանապարհն այնուհետև ոլորվեց դեպի Գանձասար: Գեղատեսիլ բարձունքի վրա կանգնած վանքը Աստծու աչքի պես հսկում է արցախյան հովիտներն ու հեռաստանները՝ իր մարդակերտ գեղեցկությամբ ներդաշնակելով բնության հրաշքներին: Ի՜նչ կարևոր դերակատարություն է ունեցել Գանձասարը պատերազմական դժվար տարիներին: Գ. Մելիքյանը հիշեց, թե այն ահեղ օրերին ինչպես էին դեռևս չկնքված հայ զինվորներն այստեղ մարտից առաջ մկրտվում ու ստանում Պարգև սրբազանի օրհնությունը:

- Այստեղ եկողները, ասաց նա ուսանողներին, քաջ գիտեն՝ ինչի համար են գալիս: Այն ժամանակ եթե նրանք չգային, այսօր մենք չէինք կարող գալ: Մենք Երախտապարտ ենք բոլոր նրանց, ովքեր իրենց անմահ սխրանքով անառիկ պահեցին այս սրբազան վայրերն ու հուշարձանները:

Պաշտամունքային ճարտարապետական այս բացառիկ գլուխգործոցը՝ վաղ միջնադարից հարատևող Գանձասարը, արցախահայության համար դարերի հոլովույթում միայն քրիստոնեական հավատի ամրոց չի եղել. այն հաղթանակի առհավատչյա է նաև ներկա ու գալիք սերունդների:

Արցախյան օրերը, կարելի է ասել, այս անգամ էլ գերիագեցած էին: Տպավորիչ էր Ստեփանակերտում ԵՊՀ ուսանողների և նրանց ուղեկցող պրոֆեսորների հանդիպումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետ պրն Ա. Հարությունյանի հետ: Ավելի քան մեկ ժամ տևած հանդիպումն անցավ անկեղծ մթնոլորտում, ուր մեծարգո վարչապետը սիրահոժար պատասխանեց երկրի բարգավաճման, արդյունաբերության ու գյուղատնտեսության, գիտության, կրթության ու մշակույթի, ազգային անվտանգության, արդեն երկու տասնամյակ կայացած Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման, մայր Հայաստանի հետ է՛լ ավելի մերձեցման հնարավորությունների և համալսարանականների տարաբնույթ մյուս հարցերին:

- Մեր անվտանգության ամենահուսալի երաշխավորը, - ասաց պրն վարչապետը,- մեր բանակն է, որ այսօր ավելի մարտունակ է, քան երբևէ: Ճիշտ է, որ բանակում լինում են նաև անկարգության դրսևորումներ, բոլորիս համար անցանկալի դեպքեր, բայց ո՞ր բանակում չկան դրանք, կարո՞ղ եք ասել: Մի երկու անցանկալի միջադեպերը բանակը վարկաբեկելու պատճառ չեն:

Հերոսները չեն մոռացվում…

Բարձր են այնտեղ սպայական կազմի և զինվորների փոխըմբռնումն ու բարոյական ոգին, մարտական պատրաստականությունը, արդիական զինատեսակներին տիրապետելու հմտությունը հայրենիքի պաշտպան լինելու գիտակցությունը: Ինչ զինտեխնիկա ունի Ադրբեջանը՝ մենք էլ ունենք, մեր զինվորների քանակը համարժեք է նրանց զորական ուժին: Այսպես ենք կարողանում պահել հավասարակշռությունն ու խաղաղությունը: Իսկ եթե այդ հավասարակշռությունը երբևէ խախտվի, նրանք կհարձակվեն, բայց դա տեղի չի ունենա, քանի որ նրանք գիտեն, որ այդ դեպքում իրենք կստանան արժանի հակահարված և շատ խիստ կպատժվեն: Իսկ այս իրավիճակը կպահպանվի այնքան ժամանակ, մինչև նրանք հարկադրված լինեն ճանաչել իրենցից ազատագրված Արցախի պետական անկախությունը:

ԼՂՀ վարչապետ պրն Ա. Հարությունյանը ԵՊՀ պատվիրակներ հետ զրույցի պահին

Վարչապետի հանգամանալից բացատրություններից, ինքնավստահ պատասխաններից ամենքը հասկացան, որ երկրի պաշտպանությունը հուսալի ձեռքերում է: Արցախի ազատագրումով ոչ միայն արդեն երկու տասնամյակ գոյատևում է հայոց երկրորդ անկախ պետությունը, այլև հայության կյանքում, հայոց պատմության մեջ սկսվել է շրջադարձային նոր փուլ, և Արցախի անկախ պետականության միջազգային ճանաչումը նոր կարևոր քայլ կլինի մեր համազգային խնդիրների լուծման ճանապարհին:

Թեև ձնախառն անձրևը փորձեց խանգարել ծառատունկը Բերձորում, սակայն անկարող եղավ ազդելու ընդհանուր բարձր տրամադրության վրա ԵՊՀ ուսանողների, որոնք Արցախում իրենց ծառերը տնկած, հայրենագիտական անմոռանալի դասեր ստացած՝ ուրախ պարերով ու երգերով հրաժեշտ տվին Արցախին՝ կրկին այնտեղ մեկնելու և նրա զորացմանը իրենց նպաստը բերելու հաստատ որոշումով:

ՄԱՍՆԱԿԻՑ

ՉԽՈՆԱՐՀՎՈՂ ԵՂԵԳ

Բերձորում՝ ազատագրված Արցախը Հայաստանին կապող մայրուղու եզրին, հիմնադրվեց նոր պուրակ, դրվեց հուշաքար ականավոր գրող, հրապարակախոս, թարգմանիչ ու հանրային գործիչ Ստեփան Ալաջաջյանին: Հանգամանքների բերումով նա ծանր հիվանդությամբ մեկնեց Ամերիկա, այնտեղ կնքեց իր մահկանացուն և մեկ տարի հետո … վերադարձավ հայրենիք:

Մերօրյա այս հրաշքին կարող են հավատալ բոլոր նրանք, ովքեր հոկտեմբերի 1-ին ներկա »Ստեփան Ալաջաջյան« պուրակի և գրողի հիշատակը հավերժացնող հուշաքարի բացման արարողությանը:

Եվ ոչ միայն նրանք:

Արարողությունն սկսվեց պրոֆ. Գ. Մելիքյանի բացման խոսքով, այնուհետև շրջանի վարչակազմից պրն Մխիթարյանը ողջունեց Ալաջաջյան և Հայրապետյան ընտանիքներին, Ստ. Ալաջաջյանի հարազատներին ու ներկաներին: Իր հավաստիացնող խոսքում նա մասնավորապես ասաց.

-Մեր հարևանները շարունակ հոխորտում են, թե իրենք շուտով լինելու են Ստեփանակերտում և Շուշիում, այս հողատարածքներում և ամբողջ Արցախում: Բայց մենք շատ լավ գիտենք մեր եղբայրների և քույրերի արյունով ազատագրված այս հողի գինը և ոչ միայն մի թիզ անգամ չենք զիջելու թշնամուն, այլև այսպիսի հետաքրքիր նախաձեռնություններով, մեր ժողովրդի արժանավոր զավակների հիշատակի հավերժացումով իմաստավորելու, ծաղկեցնելու և գեղեցկացնելու ենք այն հայ սերունդների համար:

Ստ. Ալաջաջյանի կյանքի և գրական վաստակի մասին բովանդակալից խոսք ասաց պրոֆ. Սամվել Մուրադյանը.

- Հարուստ կենսագրություն է ունեցել Ստ. Ալաջաջյանը, Մեր ժողովրդի ճակատագրի մի մանրապատկերն էր նա, այն հայորդիներից, որ ծնվել էր Դեր-Զոր աքսորված, հրաշքով փրկվելով Զեյթուն վերադարձած, ապա թշնամուն դիմադրելով Հալեպ հաստատված հայ ընտանիքում:

Համաշխարհային երկրորդ պատերազմի ավարտին՝ դեռևս ուսանող, նա իր համախոհների հետ միասին արտասահմանում հրատարակում էր «Դեպի երկիր» պարբերականը, եղավ սփյուռքահայությանը դեպի հայրենիք կողմնորոշողներից մեկը: 1946 թ. իր ծնողների հետ միասին առաջին հայրենիք վերադարձողներից էր նա ու Երևանի Զեյթուն թաղամասի առաջին բնակիչներից մեկը: Մինչև իր ճակատագրական հիվանդությունը նա ապրեց հայրենիքում: Եվ քանի որ իր կերպավորած հերոսների պես ի բնե ուներ հայ լինելու, հայ ապրելու և հայ ապրեցնելու հզոր կամք ու ձգտում, թե՛ որպես գրող ու գրական կյանքի կազմակերպիչ, թե՛ որպես ազգային գործիչ իր բոլոր ուժերը անմնացորդ նվիրեց անմնացորդ նվիրաբերեց մայր ժողովրդին ու մեր հայրենիքին: Նա ստեղծել է անմահ երկեր, որոնք, գեղարվեստական ու ճանաչողական բարձր արժեքներ լինելով, մեր ժողովրդի գրական մտածողությունը մոտեցրեց արդի համաշխարհային գեղարվեստական մտքի նվաճումներին: Տիրապետելով անգլերենին, ֆրանսերենին և այլ լեզուների՝ հենց բնագրից կատարել է որակյալ թարգմանություններ Շեքսպիրից, ժան Պոլ Սարտրից ու այլ հեղինակներից: Նրա նպատակը հայության առաջադիմությունն էր, Հայաստանի հզորությունը, մեր ազգային երազանքների իրականացումը:

Ծառատունկ «Ստեփան Ալաջաջյան» պուրակում:

Այս գեղեցիկ պուրակն ու հուշաքարը հարգանքի տուրք են մահվան դեմ անգամ չխոնարհված մեծ հայի հիշատակին:

Այնուհետև վարչակազմի ղեկավարի հետ միասին հուշաքարը բացելու հրավիրվեցին ԱՄՆ-ից եկած Ալաջաջյանները: Նրանց բոլորի անունից երախտագիտություն հայտնեց գրողի որդին՝ Զոհրաբ Ալաջաջյանը.

Գրողի հիշատակը հավերժացնող կոթողի մոտ՝ «Ստեփան Ալաջաջյան» պուրակում

- Այսօր՝ նրա մահից մեկ տարի անց, նրա կորստյան կսկիծը հաղթահարած հպարտ մարդիկ են Ալաջաջյանները: Այդ հպարտությունն ինքն է պարգևել ոչ միայն մեզ, այլև ամբողջ հայությանը թե՛ ի Հայաստան և թե՛ ի սփյուռս աշխարհի:

Մեզ համար նա լավ ընտանիքի հայր էր, իսկ սերունդների համար հայ էր՝ այս բառի ամենաընդգրկուն հասկացությամբ:

Որքա՜ն պիտի ուրախանար ազատագրված Արցախ աշխարհի այս գողտրիկ անկյունում իր անվան պուրակի և հուշաքարի իրողությամբ:

Մեր խորին շնորհակալությանը Քաշաթաղի շրջանի վարչակազմին, Բերձորի քաղաքապետարանին՝ այս հողատարածքը տրամադրելու համար, և «Գուրգեն Մելիքյան» հիմնադրամին ու անձամբ նրա գործադիր տնօրենին, որի անխոնջ հոգատարությամբ գլուխ եկան և՛ պուրակն ու հուշաքարը, և՛ այս հոյակապ միջոցառումը:

ԱՆՀԵՐՔԵԼԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հայոց ցեղասպանությունը, հակառակ հին ու նոր թուրքերի ներդրած սիզիպոսյան ջանքերի, ոչ միայն չի մոռացվում, այլև ունենում է իր հին գաղտնիքների նորանոր բացահայտումներ, որոնք ավելի են ամբողջացնում նախորդ դարասկզբին մարդկության դեմ գործված մեծ ոճիրի պատկերը: Պարզվում է՝ «ցեղասպանությունների դար» հորջորջված 20-րդ դարը բնութագրող գրքերում, որ 21-րդ դարասկզբին լույս են տեսել ԱՄՆ-ու և Եվրոպայում, մարդկության դեմ գործված մեծագույն հանցանքը՝ հայերի ցեղասպանությունը չի էլ հիշատակված, և իրականում այն շատ ավելի մեծ ծավալներ է ունեցել, քան մինչև հիմա հայտնի է եղել պատմությանը: Թուրքիայի ներկա կառավարությունը ցեղասպանության իրողությունը՝ իր նախորդների կատարած ոճիրը հերքող իր «հրաժարելով հրաժարիմք»-ը ամենուր հնչեցնում է այնպիսի ծիծաղելի համոզվածությամբ, ինչպես բոլոր իրենց հորինած ստերին լրջորեն հավատացողները, որ հետո, ուշացած զղջումով, իրենք իրենց են դատապարտում: Պայմանական այդ «հետո»-ն էլ, թեև ուշացումով, հիմա է եկել, և ինչքան շուտ կայանա խոստովանությունը, այնքան թեթև կլինի քավության բեռը:

Երևանի պետհամալսարանի արևելագիտության ֆակուլտետում հոկտեմբերի 24-ին կայացավ Ռոզմարի Հարությունյան – Քոհենի «Խոյեցի վերապրած Արուսյակը» գրքի շնորհանդեսը պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցությամբ, հեղինակի, թարգմանչի, խմբագրի ներկայությամբ: Գիրքը 2002 թ. անգլերենով լույս էր տեսել ԱՄՆ-ում, 2006-ին՝ պարսկերենով Թեհրանում և ահա 20011-ին՝ հայերեն՝ հրատարակությամբ՝ Երևանում, որն իրականացել է «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրենի, ինչպես նաև Հարությունյանների ընտանիքի նյութական աջակցությամբ:

Բացելով շնորհանդեսը՝ արևելագիտության ֆակուլտետի դեկան պրոֆ. Գ. Մելիքյանը համառոտ ներկայացրեց գրքի հրատարակման պատմությունը և նրա կարևորությունը հայոց պատմության ոչ հեռու անցյալի գաղտնիքները բացահայտելու գործում: Վաստակաշատ գրականագետ, պրոֆ. Սամվել Մուրադյանը, ով անգլերենից թարգմանված գիրքը բացառիկ վարպետությամբ վերածել է գրական ոսկեղենիկ հայերենի և գրել բնութագրական առաջաբան, խոսելով գրքի արժանիքների մասին՝ մասնավորապես ասաց, որ այն միայն 1917-18 թթ. Խոյի հայության ջարդից հազիվ փրկված Արուսյակի կյանքի պատմությունը չէ՝ գրառված նրա թոռան՝ գրողի և գեղանկարչի ձիրքերով օժտված Ռոզմարի Հարու-

թյունյանի ձեռքով: Գիրքն ունի ոչ միայն գեղարվեստական, այլև պատմաճանաչողական ու ազգագրական որոշակի արժեք, որովհետև նրա էջերում ներկայացված են ոչ միայն գրական կերպարի մակարդակը բարձրացած իրական մարդկային բնավորություններ, այլև պատմական այն միջավայրը, բարքերն ու կենցաղը, որով ժամանակին ապրել է իրա-նահայության մի ստվար հատվածը: Հեռավոր ժամանակներից Պարսկահայքում՝ Խոյում և նրա շրջակայքում հաստատված հայերը պարսիկների հարևանությամբ ապրել են խաղաղ, բարիդրացիության պայմաններում՝ իրենց ազգային դիմագիծը, հավատքը, սովորույթները պահպանելով:



Գրքում պարսկահայերի համայնքային սովորույթներն ու ծիսական արարողությունները պատկերող շատ գեղեցիկ էջեր կան: Բայց ահա հայության այդ հատվածի խաղաղ ու բարեկեցիկ կյանքին էլ միջամտում է թուրքական յաթաղանը: Արևմտյան Հայաստանում հայերի ջարդն ու բռնի տեղահանությունը ավարտած համարելով՝ թուրք ջարդարարները, 1917 թ., օգտվելով պարսկական պետության թուլությունից, հայերին իսպառ բնաջնջելու մոլուցքով ներխուժում են Իրան և իրագործում Խոյի հայության կոտորածը, որի վկայագրողն է Ռոզմարին՝ իր տատ Արուսյակի և ուրիշ ականատեսների պատումներն ի մի բերելով: Արուսյակ Հայրապետյանի պատումները, որ գրառել է նրա թոռ Ռոզմարին, չափազանց նման են թուրք փաստաբան Ֆեթհիյե Չեթինի գրքում Բալու քաղաքի և նրա շրջակայքի հայերի կոտորածների մասին նրա հայուհի տատի՝ Կատարի՝ թրքացած Սեհերի վկայագրություններին: Ուրեմն թուրքերը թե Արևմտահայստանում, թե՛ Պարսկաստանում հայերին ջարդելիս գործել են նույն ծրագրով ու ձեռագրով: Դահլիճն ուղղակի սարսռաց, երբ խմբագիրն իր խոսքում հիշեց իր հոգևոր հոր և ավագ ընկերոջ՝ մեծն Հովի. Ծիրազի հետևյալ տողերը.

Թուրքն հայի արնից ձեռքերը հանում,
Աստծու արցունքի մեջ է լվանում,
Սրբում սրբիչով ազգերի տված,
Սրբիչ լռությամբ նրանց անաստված...

Ռ. Հարությունյան-Քոհենը հավատարիմ է մնացել պատմական ճշմարտությանը՝ դեպքերը ներկայացնելով եղածին պես:

Խոյի հայության ջարդն էլ ուղեկցվել է թուրքերին բնորոշ բացառիկ վայրագություններով. անխնա սպանել են միայն հայ լինելու համար, առանց սեռի և տարիքի խտրության, չեն խնայել անգամ հղի կանանց՝ թրատելով չծնված պտուղներին: Համատարած սպանդից մարդիկ փրկվել են կամ կազմակերպված իքնապաշտպանության, կամ հարևան պարսիկների անձնազոհ բարյացակամության շնորհիվ: Իրական անձնավորություններ են և՛ Եփրեմի նման հերոսական բնավորությունը, և՛ պարսիկ բժիշկ էֆթեխարը, որը ամեն կերպ ջանացել է օգնել ծայրահեղ վիճակում հայտնված հայ նեղյալներին:

Գիրքը գրված է ջերմությամբ,- ասաց պրոֆ. Ս. Մուրադյանը,- ընթերցվում է հետաքրքրությամբ: Այն արժանահավատ են դարձնում հերոսների, տեղավայրերի լուսանկարներն ու հեղինակի յուղանկար գործերի լուսապատճենները, եղելությունների վավերականությունը հաստատող անհրաժեշտ փաստաթղթերը:

Թարգմանիչ Արա Յ. Ավանեսյանն իր խոսքում ընդգծեց իր թարգմանած գրքի իրանահայերենը գրական հայերենի վերածելու ուղղությամբ պրոֆ. Ս Մուրադյանի կատարած հիրավի մեծ աշխատանքը:

Վերջում գրքի հրատարակիչներին, թարգմանչին, խմբագրին և գրքի տպագրության աջակիցներին իր շնորհակալությունը հայտնեց հեղինակը՝ Ռոզմարի Հարությունյան–Քոհենը՝ ներկայացնելով նաև գրքի ստեղծման պատմությունը:

ԱԼ. ՍԱՖԱՐՅԱՆ

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՑ» ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑԱԾՆԵՐԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Արմեն Մխիթարյանի նամակից.

Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին

Քաշաթաղի երիտասարդությանն աջակցելու համար թույլ խորին տվեք շնորհակալություն հայտնել հիմնադրամին՝ հանձին նրա տնօրեն պրոֆեսոր Գ. Մելիքյանի:

Տարիներ շարունակ Ձեր հիմնադրամն անգնահատելի օգնություն է ցուցաբերում Քաշաթաղի երիտասարդ ուսանողներին, որոնք Արցախի ապագան կերտող այսօրվա սերնդի մի մասն են կազմում:

Հիմնադրամի օժանդակությունը պարտավորեցնող է, քանի որ մեզ՝ երիտասարդներիս հնարավորություն է տալիս հայոց մայր բուհում ստանալու բարձրագույն կրթություն, խոր և համակողմանի մասնագիտական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ կլինեն մեր հայրենիքի զարգացման գործում մեր ներդրումն ունենալիս:

Քաշաթաղցի բոլոր ուսանողների և անձամբ իմ անունից խորին շնորհակալություն եմ հայտնում և Ձեր հիմնադրամին ցանկանում երկար տարիների ազգանպաստ գործունեություն:

ԼՂՀ Քաշաթաղի շրջանի Բերձորի բնակիչ, ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող՝

ԱՐՄԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Լիլիթ Ղազարյանի նամակից.

Մեծարգո Տեր և Տիկին Վարուժան և Էմմա Կյուրեղյաններ,

Ձեր դրամական աջակցության շնորհիվ, որ ստացա «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» միջոցով, ես հնարավորություն ունեցա ուսումս շարունակելու ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում:

Հայոց լեզուն ու հայ գրականությունը, որ իմ ապագա մասնագիտությունն է, հայապահպանության գլխավոր հենարանն է: Ծնվել եմ Ձավախք աշխարհի Գանձա գյուղում, որը հայ ժողվրդի մեծ բանաստեղ Վահան Տերյանի ծննդավայրն է: Աներկբա ճշմարտություն է այսօրվա Ձավախքի սոցիալական ծանր վիճակը, իսկ վերջին տարիներին դրան ավելացել է հայ մարդու ազգային դիմագիծը կորցնելու վտանգը:

Ինձ համար կրկնակի կարևոր է շարունակել ուսումս և ստացած գիտելիքներս ծառայեցնել Ձավախքում հայապահպանության գործին: Դա գրեթե անհնար կդառնար, եթե չլիներ Ձեր անշահախնդիր աջակցությունը, քանի որ մայրիկիս ուժերից վեր կլիներ հոգալ թե՛ իմ ուսման, թե՛ անչափահաս եղբորս խնամքի ծախսերը: Լավ բանասեր դառնալը իմ երազանքն է եղել: Ես ինձ

պարտավորված եմ զգում ինձ լավ դրսևորելու, հնարավորինս լավ սովորելու և հայրենիքիս պիտանի լինելու:

Ընդունեք իմ խորին երախտագիտությունն ու անկեղծ հարգանքը Ձեր բարձր նկարագրի, ազնիվ մարդասիրության հանդեպ և ջերմ շնորհակալությունը:

Ամենայն հարգանոք և սիրով՝՝

Ձեր ԼԻԼԻԹ ՂԱԶԱՐՅԱՆ
ՎՀ Նինոծմինդայի շրջան,
գ. Գանձա

Օֆելյա Կիրակոսյանի նամակից.

Մեծարգո Տեր և Տիկին Սարո Մարգարյան և Կարինե Աբուլյան, իմ հեռավոր, անծանոթ, սակայն սիրելի հարազատներ,

Դժվարանում եմ արտահայտվել Ձեր օրինակելի մարդասիրության մասին, որովհետև Ձեր բարեհոգությունը և ներկա պայմաններում ուսանողներին անշահախնդիր աջակցությունը վեր է ամեն գնահատանքից:

Գիտեի, որ Դուք «Գուրգեն Մելիք-յանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» նվիրատուներից եք և հնարավոր ամեն ինչով նպաստում եք նրա հայրենանվեր ծրագրերի իրականացմանը: Բայց ահա ի հայտ եկավ Ձեր բարեգործության մի այլ դրսևորում, որն ինձ համար ունի պարզապես փրկարար նշանակություն:

Վաղ տարիքում երիտասարդ հայրիկիս կորցնելուց հետո մեր ընտանիքի հոգսերի բեռը՝ տատիկիս, դպրոցահասակ քույրիկիս ու եղբորս խնամքի ողջ ծանրությունն ընկել է մայրիկիս ուսերին: Նրա չնչին աշխատավարձը հազիվ է բավարարում մեր ընտանիքի առօրյա կարիքները: Նման իրավիճակում ավելորդ պիտի լիներ մտածել իմ կրթության վարձավճարի մասին:

Դուք Ձեր ազնիվ արարքով վերստին հավաստում եք, որ Աստված մարդու առջև բոլոր դռները չի փակում: Ինձ համար Դուք եք այն բաց դուռը, այն կանաչ ճանապարհը, որով ես կարող եմ հասնել իմ երազանքներին:

Ձեզ իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում և աղոթում Ձեր առողջության ու հաջողության համար:

Որդիական սիրով՝ Ձեր

ՕՖԵԼՅԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հեռակա 3-րդ կուրսի ուսանողուհի

ք. Երևան

2010թ. նոյեմբերի 1-ից մինչև 2011 օգոստոս ամիսը հիմնադրամին նվիրաբերված գումարները՝ ՀՀ դրամով

№	Անվանում	Գումարի չափը	Նպատակը
1	ՖՐԻԴԱ ԱՆՏՈՆՅԱՆ ԱՋ	120000,00	Ուսման ծրագիր
2	ՔՐԻՍՏԻՆԵ ԱՆԴՐԻԱՍՅԱՆ ԱՋ	120000,00	Ուսման ծրագիր
3	Կոմպասս ՍՊԸ	150000,00	Ուսման ծրագիր
4	ARA KHANOYAN	1912768,00	
5	VIGEN ZARGARIAN	358000,00	
6	BAGHDASARIAN ALEC	286105,00	
7	GRIGOR MAHSESRJIYAN	239008,00	
8	AMIRKHANIAN VOVA	180000,00	
9	BALIAN RAFFI & PATTI	179500,00	
10	GALSTANIAN & MADINYAN RAFIK & RITA	179500,00	
11	GARIKIAN /KAREK LOZIK	179500,00	
12	RALFI ROOBEN ZAVIH BABAKHANIAN	179500,00	
13	BABAJANIAN ISHKHAN	179500,00	
14	HAKOBYAN ROOBEN	179500,00	
15	KOLOGNOMOS MEDEA & ALEXANDER	179500,00	
16	JANGOZIAN VARDAN	179500,00	
17	FUNDUKIAN VARDAN & ANNA	108000,00	
18	CHARCHIAN DR.DAVID & NAZELI	107700,00	
19	BADALIAN SOUREN	107700,00	
20	HAYRAPETIAN DENTAL HAYK & TEREZA	107550,00	
21	VAHAN ALADADIAN	89750,00	
22	JULFAI JONNY&TSAGHKISH	71900,00	
23	BASHMAKIAN HAKOB	71800,00	
24	KHOURDAJIAN ONIK	17950,00	
25	MATEVOSIAN JORJ	18668,00	
26	MELQONIAN M OR S	35800,00	
27	MATEVOSIAN MATEVOS	53850,00	
28	LIBARIAN JASMINE(HASMIK)	71800,00	
29	MARASHLIAN LEVON	107700,00	
30	KAZANDJIAN VAHE & SEDA	180000,00	
31	PETROSIAN SEDA	53925,00	

32	SEROPIAN VARTKES	107700,00	
33	PIRJANIAN SOUREN	179750,00	
34	PEROOMIAN ROSALINE	179750,00	
35	SHAHBAZIAN SHARIS	179750,00	
36	ԽԱԼԱԹՅԱՆ ԳԱԳԻԿ Պառնաս ՍՊԸ	100000,00	Ուսման ծրագիր
37	ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՍԻՄՈՆ Բերկրի ՍՊԸ	100000,00	
38	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
39	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
40	Գուրգեն Մելիքյան	15000,00	Ծառերի ծրագիր
41	Գուրգեն Մելիքյան	15000,00	Ծառերի ծրագիր
42	NECKLACE	7180,00	
43	OVANESIAN IRINA	7180,00	
44	ՕՀԱՆՅԱՆ ԳԱՌՆԻԿ	35900,00	
45	MOLOIAN VARTANIAN SHUSHAN	35900,00	
46	MKRTCHIAN HAKOB	72000,00	
47	NAHAPETIAN MADLEN NADER	107850,00	
48	MUSHOYAN HAKOB & MARY	180000,00	
49	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
50	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
51	Թորոսյան Հասմիկ	107500,00	
52	Զարգարյան Նվարդ Zargarian Nvart	179500,00	
53	Վահագն Սեթյան Vahagn Setian Foundation	179500,00	
54	Չոբանյան եվ Խաչադուրյան Tchobanian & Khachadurian	179500,00	
55	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
56	Երևանի պետական համալսարան ՊՈԱԿ	150000,00	Մարզագույք ձեռբերելու համար
57	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
58	TOROSYAN ROMIK AILEEN	36500,00	
59	VARDANYAN HARRY & SHUSHAN	36500,00	
60	TOROSYAN ROSTOM & HASMIK	109500,00	
61	TUMANYAN RAFFY	109500,00	
62	ARKADY A.OVANESIAN and IRINA MOVANESIAN	1828500,00	
63	Դավթյան էդիկի եվ Հովհաննիսյան	1462500,00	
64	Թորոսյան Ռոմիկ	36300,00	
65	Վարդանյան-Մոլոյան	36300,00	
66	Թորոսյան Ռոստոմ	109000,00	
67	Թումանյան Ռաֆիկ	110050,00	
68	Եղիազարյան Վարդան	35700,00	
69	Ծառուկյան Թենի	35700,00	
70	Եղյանց Թահինյան	35750,00	
71	Եղյանց Սուրեն և Աննա	54925,00	
72	Եղյանց Հասմիկ և Արտաշես	73300,00	
73	Ծառուկյան Միմի	125500,00	
74	/անանունից/ԳԳԳ	184000,00	Ծառերի ծրագիր
75	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
76	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
77	ՓԱՅԱՍԼՅԱՆ ԵՍԱՅԻ	300000,00	Ուսման ծրագիր Ր
78	Հովսեփյան Վազգեն	22300,00	
79	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
80	ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆ պուրակ	1114500,00	Ծառերի ծրագիր
81	ZARGARYAN VIGEN	35387,50	
82	ANONYMOUS (GZ)	37250,00	
83	TOROSYAN RAFIK & KARINE	37250,00	
84	PAPYAN ARTASHES	55875,00	

85	VARDANYAN FAMILY	74500,00	
86	VOSKANYAN RUBIK	74500,00	
87	VARDANYAN RAYMOND	74500,00	
88	EGHIANC MATILDA & JORJ	93125,00	
89	ԱՄԻՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ & ԱՆԱՀԻՏ	185000,00	
90	ԱԲՈՒԼՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԵՎ ՄԱՐԳԱՐՅԱՆ ՍԱՐՈ	185000,00	
91	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
92	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
93	ԲՈՐՈՅԱՆ ՈԱՖԻԿ ԵՎ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ	100000,00	Ծառերի ծրագիր
94	Գուրգեն Մելիքյան	20000,00	Ծառերի ծրագիր
95	Նալբանդյան ԼիանաNALBANDIAN LIANA	18550,00	Ծառերի ծրագիր
96	Գոուլոպոուլոս Անաստասիա GOULOPOULOS ANASTASIA	18550,00	Ծառերի ծրագիր
97	Օրչանյան Ռիտա ORCHANIAN RITA	18550,00	Ծառերի ծրագիր
98	Եղյայան Ջորջ YEGHYAYAN GEORGE	18550,00	Ծառերի ծրագիր
99	Չիլոյան Սեպահն CHILOYAN SEPAHN	18550,00	Ծառերի ծրագիր
100	Կարագուեսյան Սարո KARAGUESIAN SARO	18550,00	Ծառերի ծրագիր
101	Չանգելյան Սենա CHANGELIAN SENA	18550,00	Ծառերի ծրագիր
102	Ուրֆալյան Սոնա URFALIAN SONA	18550,00	Ծառերի ծրագիր
103	Ոսպիգյան Ռուբինա VOSBIGYAN RUBINA	18550,00	Ծառերի ծրագիր
104	Կրաֆյան Անուշ KRAFIAN ANUOSH	18550,00	Ծառերի ծրագիր
105	Գալստյան Մարի GALSTYAN MARY	18550,00	Ծառերի ծրագիր
106	Դանիելա Ռիզզա DANIELA RIZZA	18550,00	Ծառերի ծրագիր
107	ԱՐԼՈՒԼԻ ՍՊԸ ԳՐԻԳՈՐՅԱՆ ՆՈՒՆԵ	200000,00	ՈՒՍՄԱՆ ԾՐԱԳԻՐ
108	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
109	Գուրգեն Մելիքյան	14800,00	Ծառերի ծրագիր
110	Գուրգեն Մելիքյան	14800,00	Ծառերի ծրագիր
111	Մանասյան Մաքսիմ	150000,00	
112	Գուրգեն Մելիքյան	15000,00	Ծառերի ծրագիր
113	Գուրգեն Մելիքյան	18000,00	Ծառերի ծրագիր
114	ՎԱՐՈՒԺԱՆ ԵՎ ԷՄՄԱ ԿՅՈՒՐԵՂՅԱՆՆԵՐ	780000,00	Ուսման ծրագիր
115	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
116	ԱԼԱԶԱԶՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ	365500,00	Ուսման ծրագիր
117	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
118	Փիրջանյան Սուրեն	19800,00	Ծառերի ծրագիր
119	Ֆունդուկյան Վարդան	109000,00	Ուսման ծրագիր
120	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
121	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
122	Վարդանյան Սուրեն	19800,00	Ծառերի ծրագիր
123	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
124	Գուրգեն Մելիքյան	19800,00	Ծառերի ծրագիր
125	Ավանեսյան Արա	109300,00	ԳՐՔԵՐԻ ԾՐԱԳԻՐ
	Ընդամենը	17350846,50	

2010թ. նոյեմբերից հիմնադրամին նվիրաբերված գումարները՝ ԱՄՆ դոլարով

№	Անվանում	Գումարի չափը	Նպատակը և ամսաթիվը
1	FOCUS ON CHILDERN NOW INC FCN	4991,00	Կաթի ծրագիր
2	GIRAGOS NERSES KUYUMJIAN	3000,00	
3	FOCUS ON CHILDERN NOW INC FCN	4991,00	Կաթի ծրագիր
4	ՓԻՐՈՒՄՅԱՆ ՆՇԱՆ ԵՎ ՌՈՒԲԻՆԱ	200,00	
5	FOCUS ON CHILDERN NOW INC FCN	4991,00	Կաթի ծրագիր
6	FOCUS ON CHILDERN NOW INC FCN	4991,00	Կաթի ծրագիր
7	FOCUS ON CHILDERN NOW INC FCN	4991,00	Կաթի ծրագիր
8	COWANSVILLE HOLDINGS LIMITED DRAKE CHAMBERS	20000,00	

9	FOCUS ON CHILDERN NOW INC FCN	4991,00	Կաթի ծրագիր
10	ԳԱԼՈՒՍՏ ԳՅՈՒԼԲԵՆԿՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՊՐՆ.ԶԱՎԵՆ ԵԿԱՎՅԱՆԻՑ	14905,00	
11	GIRAGOS NARSES KUYUMIJIAN	2982,00	
	Ընդամենը	71033,00	

2011 թ սեպտեմբերից հիմնադրամին նվիրված գումարները՝ ՀՀ դրամով

Անվանում	գումարի չափը	նպատակը	ամսաթիվը
1. Հակոբ և Մարի Ալթիբարմաքյաններ	1096500.00	օգնություն	15. 9. 2011
2.Սարգիս և Աիդա Բալաբանյաններ	73800.00	օգնություն ուսման ծրագիր	22. 9. 2011
3. Գյուլեջյան Անահիտ և Հակոբ	110200.00	օգնություն ծառսրի ծրագիր	23. 9. 2011
4. Աբուլյան Կարինե, Մարգարյան Սարո	260400.00	օգնություն 700 $ համարժեք	30. 9. 2011

Ընդամենը սեպտեմբեր ամսին՝ 1540900.00

5. Սահակյան Գևորգ	5800. 00	օգնություն գրքերի ծրագիր	4.10. 2011
6. Հայրապետյան Մխիթար	5800. 00	օգնություն գրքերի ծրագիր	4.10. 2011
7. Քոչարյան Ժիրայր, պրոֆ.	18450. 00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
8. Վարդանյան Սուրեն	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
9. Բախշյան Վարուժան	19800.00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
10. Բախշյան Հրաչ	19800.00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
11. Բախշյան Լյուդվիգ	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
12. Գրիգորյան Մարտիկ	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
13. Վարդանյան Ժիրայր	19800.00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
14. Իլյան Մաթևոս	196800. 00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
15. Միլիտոնյան Հայկ	25300	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
16. Ղազարյան Գոռ	59800.00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
17. Ալաջաջյան Մարգո	7440. 00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
18. Մխիթարյան Արմեն	186000.00	օգնություն ծառերի ծրագիր	4.10. 2011
19. Գուրգեն Մելիքյան	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	7.10. 2011
20. Վահագն Մահտեսի Հակոբյանց	194500.00	օգնություն ծառերի ծրագիր	7.10. 2011
21. Բախշյան Հրաչ	74600. 00	օգնություն ծառերի ծրագիր	11.10 2011

Ընդամենը հոկտեմբեր ամսին՝ 935050.00

22. Diane Tokman	75700. 00	ուսման ծրագիր	4. 11. 2011
23. Ռոզմարի Հարությունյան (Cohen)	75700. 00	օգնություն ծառերի ծրագիր	4. 11. 2011
24. Գույումջյան Կիրակոս	229800. 00	օգնություն ուսման ծրագիր	10. 11. 2011
25. Ղազարյան Լուսյա	100000. 00	օգնություն գրքերի ծրագիր	11. 11. 2011
26. Գուրգեն Մելիքյան	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	14. 11. 2011
27. Գուրգեն Մելիքյան	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	25. 11. 2011
28. Վարազ Մելիքյան	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	25. 11. 2011
29. Կարապետյան Աննա	9000. 00	օգնություն ծառերի ծրագիր	28. 11. 2011
30. Մելիքյան Գուրգեն/ Մելիքյան ընտանիք	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	5. 12. 2011
31. Մելիքյան Գուրգեն	19800. 00	օգնություն ծառերի ծրագիր	5. 12. 2011
32. Աբրահամյան ժակլին	37800. 00	օգնություն ծառերի ծրագիր	5. 12. 2011
33. Շահբազյան Կարո և Սուսաննա	150000. 00	օգնություն ուսման ծրագիր	5. 12. 2011
34. Աբրահամյան Վարուժ և Գայանե	19800. 00	օգնություն	
35. Աբրահամյան Վահիկ և Ցողիկ	19800. 00	օգնություն	

Ընդամենը նոյեմբեր - դեկտեմբեր ամիսներին՝3292550. 00

«ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ» ՀԿ-ԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝ Գ. ՄԵԼԻՔՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝ ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝ ԱՍԱՏՐՅԱՆ ԳԱՌՆԻԿ, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր
ԱՎԱԳՅԱՆ ԱՐԾՐՈՒՆ, բան. գիտ. դ-ր, պրոֆեսոր
ՄԵԼԻՔՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ, բան. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, պատմ. գիտ. թեկն, դոց.

Համարի նյութերը , շարվածքը , լուսանկարները և ձևավորումը Ս. Մուրադյանի:

Տպաքանակը՝ 99:

Թերթը բաժանվում է անվճար:

Խմբագրության հասցեն՝
Երևան 375025, Աբովյան 52 Ա,
Հայ բանասիրության ֆակուլտետի
մասնաշենք, 215 սենյակ:

Հեռ. 54 - 43 - 91 + 1 - 18
055 – 52- 29 - 36
55 - 25 - 37